Բովանդակություն

Ներածություն…… 2

Գլուխ 1. Ուսուցման մեթոդների ընդհանուր բնութագիրը..... 5

Գլուխ 2. Ուսուցման փոխներգործուն մեթոդների տեսակները, կիրառումը և դաստիարակչական նշանակությունը……..... 19

Եզրակացություն…….....31

Օգտագործված գրականության ցանկ……..…32

Ներածություն

Ուսուցում

Ուսուցումը մանկավարժական գործընթաց է: Այն ուսուցչի և աշակերտների փոխազդեցության նպատակաուղղված գործընթացն է, որի ընթացքում իրականացվում են մարդու կրթությունը,

դաստիարակությունը և զարգացումը: Այն աշակերտի իմացության ոլորտի զարգացման, նրա ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման և գիտելիքներ հաղորդելու գործընթաց է, որը կատարվում է մանկավարժի՝ ուսուցչի, դաստիարակի, դասախոսի կողմից: Ուսուցումը՝ որպես մանկավարժական գործընթաց, նույնպես ունի երկու կողմ: Մանկավարժի՝ սովորեցնողի, ուսուցչի գործունեություն, որը կոչվում է դասավանդում, և աշակերտի՝ սովորողի գործունեություն, որը կոչվում է ուսում:

Թեմայի արդիականությունը:

Նորարարական տեխնոլոգիաների ներխուժումը մեր կյանք մեծ ազդեցություն է թողնում երեխայի դաստիարակության և **աշխարհաճանաչողության** վրա: Զգալիորեն փոխվում են նաև նրա սիրելի զբաղմունքը՝ խաղերը, փոխվում են նաև նրա սիրելի հերոսներն ու, թերևս, սկզբունքները:

Ժամանակակից ուսուցումը պահանջում է կիրառել տարբեր մեթոդներ ու մեխանիզմներ, որտեղ իրենց ուրույն տեղն են զբաղեցնում ուսուցման փոխներգործուն մեթոդները, որոնց միջոցով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունն՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքներին:

Փոխներգործուն մեթոդներով ուսուցումը ճանաչողական գործընթացի կազմակերպման առանձնահատուկ ձև է, որն իր մեջ ներառում է հատուկ կանխատեսելի նպատակներ, որոնցից մեկն էլ հարմարավետ կրթական միջավայր ստեղծելն է, որտեղ սովորողը կարող է զգալ իր հաջողությունը, որն ինքն իրենով կազմում է արդյունավետ ուսուցման բաղադրիչ: Փոխներգործուն մեթոդները հիմնականում կիրառվում են ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը:

Իհարկե, ավելի հեշտ է խոսել հօգուտ ավելի էժան տեխնոլոգիաների, օրինակ՝ գրքերը, գրատախտակն ու կավիճը, և սովորեցնել նույն կերպ, ինչպես և անցյալում: Միանշանակ ինչ-որ կերպ, ինչ-որ բան կարելի է նման ձևով սովորեցնել, և նույնիսկ դաստիարակել: Սակայն ինչի՞ և ի՞նչ տեմպերով կարող ենք հասնել նման դաստիարակության արդյունքում՝ այսօրվա ժամանակակից տեխնոլոգիական հասարակության մեջ:

Կրթության որակի բարձրացումը որոշվում է ուսուցման ակտիվ գործիքների կիրառմամբ: Ակտիվ ուսուցումը ենթադրում է սովորողների ներգրավում ուսումնական գործընթաց: Այդ դեպքում սովորողը պարտադիր պետք է ակտիվ գործի և այդ գործունեության ընթացքում բացահայտի, մշակի և կիրառի ստացված գիտելիքները: Այդ պատճառով ուշադրության է արժանի ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման հնարավորությունների ուսումնասիրումը:

Հետազոտության նպատակը:

Ուսումնասիրել և վերլուծել ուսուցման փոխներգործուն մեթոդների առանձնահատկությունները և բացահայտել դրանց կիրառման արդյունավետությունը, դաստիարակչական ներգործությունը աշակերտների դպրոցում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը:

Հետազոտությունը շարադրելիս կիրառվել են զրույցի, դիտման, դիտարկման և փոխներգործուն մեթոդները:

Հետազոտության կառուցվածքն ու ծավալը:
Հետազոտությունը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից,բովանդակությունից,օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1.

Ուսուցման մեթոդների ընդհանուր բնութագիրը

Ուսուցման մեթոդներ *(հուն.՝ μέθοδος_ ճանապարհ),*

փոխներգործուն գործընթաց ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ: Ուսուցանվող նյութի ընկալում (ուսուցողական ընկալում). կարճաժամկետ փոխազդեցություն դասավանդողի և աշակերտի միջև՝ ուղղված կոնկրետ գիտելիքի[1], հմտության և կարողության փոխանցմանն ու յուրացմանը:

Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն և այլ մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդները, որոնք հիմնված են մատուցվող նյութն ընդունելու գիտակցականության աստիճանի վրա՝ պասսիվ, ակտիվ, ինտերակտիվ, էվրիստիկական և այլն: Այս բաժանումները հետագա հստակեցման կարիք ունեն, քանի որ ուսուցման գործընթացը չի կարող լինել պասսիվ, ու նաև միշտ չէ, որ այն սովորողների համար իրենից հայտնագործություն է ներկայացնում:

Ուսուցման մեթոդները բազմաթիվ են ու բազմաբնույթ: Մանկավարժական վարպետություն ունեցող ուսուցիչն իր

1.https//ru.m.wikipedia.org>wiki/

ուսումնական գործունեության ընթացքում, իրենից անկախ, կիրառում է այնպիսի մեթոդներ ու հնարներ , որոնք, նույնիսկ, մանկավարժությանը հայտնի չեն: Մանկավարժության մեջ մեթոդը հասկացվում է մի կողմից որպես ուսուցչի, իսկ մյուս կողմից՝ որպես աշակերտի գործունեության եղանակ: Այլ կերպ ասած,

մեթոդը փոխազդեցության, փոխգործողության եղանակ է, ուսուցչի և աշակերտի աշխատանքի առանձնահատկությունների արտահայտությունն ուսուցման գործընթացում:

Մեթոդն ուսուցչի համար դասավանդման, իսկ աշակերտի համար՝ գիտելիքները, կարողություններն ու հմտությունները յուրացնելու եղանակ է: Ուսուցման մեթոդները փոխներգործուն գործընթաց է ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ: Ուսուցանվող նյութի ընկալում (ուսուցողական ընկալում), կարճաժամկետ փոխազդեցություն դասավանդողի և աշակերտի միջև՝

ուղղված կոնկրետ գիտելիքի, հմտության և կարողության փոխանցմանն ու յուրացմանը:

Պասիվ մեթոդ, սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը գլխավոր դերակատարն է և դասի ընթացքի ղեկավարը, իսկ սովորողները պասիվ լսողի դերում են և ենթարկվում են ուսուցչի հրահանգներին:

Ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդ , ինտերակտիվ («Inter» - փոխադարձ, «act»- գործել), նշանակում է փոխներգործել, գտնվել ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ: Այլ կերպ ասած՝ եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ. նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է:

Դասավանդողը մշակում է նաև դաս պլանը (սովորաբար այն կազմվում է ինտերակտիվ վարժություններից և առաջադրանքներից, որոնց կատարման ընթացքում աշակերտը սովորում է նյութը):

Հետևաբար, ինտերակտիվ դասերի հիմնական բաղադրիչներն են ինտերակտիվ վարժությունները և

առաջադրանքները, որոնք կատարվում են սովորողների կողմից: Ինտերակտիվ վարժությունների և սովորական հանձնարարությունների տարբերությունն այն է, որ կատարելով դրանք՝ սովորողը ոչ միայն և ոչ այնքան ամրապնդում է արդեն յուրացված նյութը, որքան ուսումնասիրում, յուրացնում է նոր նյութը:

Այլ կերպ ասած՝ եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը: Այսօրվա կրթական պահանջն է ուսուցումը դարձնել համագործակցային և աշակերտակենտրոն: Աշակերտակենտրոն կրթություն իրականացնելու համար պետք է զարգացնել սովորողի քննադատական, ստեղծագործական մտածողությունը, ձևավորել կյանքի նկատմամբ ակտիվ վերաբերմունք ունեցող քաղաքացի: Եվ այս խնդրի առջև կանգնած ուսուցիչը պետք է կարողանա համահունչ քայլել կրթական համակարգում տեղի ունեցող գործընթացների հետ և իր գործողությունները պլանավորելիս հաշվի առնել ոչ միայն մատուցվող գիտելիքները, այլև այն թե ինչպես կարելի է այդ գիտելիքները հասանելի դարձնել աշակերտներին: Կրթական ոլորտի կարևոր, բաղկացուցիչ մասն են կազմում մանկավարժական

տեխնոլոգիաները այսօր բոլորը խոսում են արդյունավետ ուսուցման և կրթության որակի բարելավման մասին: Ներկայումս կարևորվում է աշակերտների ակտիվ և նախաձեռնողական մասնակցությունը դասին, ինքնուրույնությունը, սեփական դատողություններ անելու կարողությունն ու հմտությունը: Ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է կիրառվող մեթոդներով, որոնք ապահովում են դասավանդողի և սովորողի փոխկապակցված գործունեությունը:Լայնորեն կիրառվում են նաև <<ուսուցման փոխներգործուն մեթոդները>>:

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում:Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ներառելով պրակտիկվարժություններ, խնդիրներ:Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների,

կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակէ պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով:Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը:

Ակտիվ մեթոդները պետքէ կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը:Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում:Օրինակ՝կոնկրետ իրավիճակների վերլուծությունը կարող է ունենալ ուսուցման երկու նպատակ.

**Համախմբել ուսուցման ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքները,*

**Կատարելագործել արդեն ձեռք բերած հմտությունները,*

Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ սովորողների ների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռքբերում՝ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում:

Այսպիսով,ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ: Լ.Ս.Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ[2]:

2. L.VYGOTSKY…vipusk-party.ru

Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և սովորողների միջև, այնպես էլ իրենց, սովորողների միջև:Երկխոսության ընթացքում զարգանում հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է սովորողների խոսքը:Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է սովորողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառելու սովորողների կողմի ձեռք բերված գիտելիքները:Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն):Ակտիվ մեթոդները զուգակցվում են իլյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքրիր նյութերի ցուցադրություններ:

Մարդը շրջապատող միջավայր ընկալում է իր 5 զգայարաններով:Սակայն տեղեկատվության ընկալման գլխավոր դերը կատարում են աչքերը:Մարդու կարողությունները չափազանց սահմանափակվում ե այդ զգայարանի բացակայության դեպքում: Այդ պատճառով էլ ուսումնական գործընթացներում կարևոր տեղ է հատկացվում տեսողականացմանը:Տեղեկատվությունը և ուսումնական բովանդակությունը միշտ պետք է ներկայացվեն ընկալման տեսողական ծավալների հաշվառմամբ, աչքերին՝թողնելով առավել էական առարկաներն ու երևույթները:Տեսողականացման տակ մենք հասկանում ենք տեղեկատվության կամ ուսումնական բովանդակության պատկերազարդումը ակներև պատկերների միջոցով:Հետևաբար ,տեսողականացումը պատկերազարդման մեթոդ է, ինչպես նաև միջոց:Պատկերազարդման այլ հնարավորություններ են մոդելների ներկայացումը, գործընթացի ցուցադրումը, առարկաների գործածումը: Հետազոտությունները ցույց են տվել, որ

Երբ դուք ինչ-որ բան կարդում եք՝ հիշում եք 10%

Երբ դուք ինչ-որ բան լսում եք՝ հիշում եք 20%

Երբ դուք ինչ-որ բան տեսնում եք՝ հիշում եք 30%

Երբ դուք ինչ-որ բան տեսնում և լսում եք հիշում եք 50%

Երբ դուք ինչ-որ բան ինքնուրույն եք անում՝ հիշում եք 90%-ը:

Ցուցադրությունը (դեմոնստրացիա) ուսումնառողներին՝երևույթներին, գործընթացներին, օբյեկտներին բնական վիճակում զննական-զգայական ձևով ծանոթացնելն է:Պատկերազարդումը (իլյուստրացիա) ենթադրում առարկաների, երևույթների ցուցադրումն ուընկալումը դրանց սիմվոլիկ պատկերներով:Այս մեթոդի անվանման հիմքը անգլ. action- փոխազդեցություն բառնէ:Սկզբնական շրջանում այսպես էր անվանվում ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավեճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ էր տալիս:Հետագայում ավելի տարածվեց «ինտերակտիվ մեթոդներ» բառակապակցությունը, որը ներառում էր վերոհիշյալ հնարավորություններով դրսևորվող ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ;Իհարկե,ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցություն է:Մասնավորապես՝ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է:Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով,

ձևերով ու բովանդակությամբ:Դաս-դասարանային համակարգի ուսուցման գործընթացի կառուցվածքային հիմքում դրված է փոխազդեցության ուսուցիչ-աշակերտական խումբ ձևը:Սա է պատճառը, որ ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ընդհանուր ճակատով, այսինքն՝աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով, տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը:Նման տեսակի ուսումնական պարապմունքները մենք անվանում ենք խմբային:Խմբային պարապմունքների բավական լուրջ պրոբլեմներից մեկ այն է, որ ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում:Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցությանկ ազմակերպումն է, ինչն էլ հենց հանդիսանում է ինտերակտիվ մեթոդի հիմնական գաղափարը:Սակայն խմբային ուսուցման պայմաններում աշակերտների միջև փոխազդեցություն կազմակերպելու հնարավորությունները սահմանափակեն:Այստեղ հիմնականում օգտագործվում են ենթախմբային կամ համախմբային քննարկումների տարբեր հնարքներում մեթոդներ, որոնք բավական արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման, ընդհանուր մոտեցումների մշակման համար:Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվում է

խաղը, ապա ուսուցման կազմակերպման համար պետք է օգտագործեն գործունեության այս ձևը՝համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործե խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու համար:Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը:Բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ սովորողների ոչ բավարար բարձրո ւնակությունների ժամանակ, բայց հակառակ ուղղությամբ այդ սկզբունքը չի աշխատում՝ոչ մի կարողություն չի կարող փոխհատուցել մոտիվացիայի բացակայությունը, և ապահովել ուսուցման էական առաջընթաց:Բնական խաղային միջավայրում, որտեղ չկա պարտադրանք, և կահ նարավորություն յուրաքանչյուր երեխայի համար գտնել իր տեղը, ունենալ նախաձեռնություն և անկախություն, ազատ իրականացնելու իրենց կարողությունները և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու օպտիմալ տարբերակ:ԵՎ կրթական գործընթացում:Ուսուցման ակտիվ մեթոդների ներառումը թույլ է տալիս ստեղծել այդպիսի միջավայր՝ինչպես դասարանում, այնպես էլ արտադպրոցական միջոցառումների ժամանակ:Կան ուսուցման ակտիվ մեթոդների տարբեր դասակարգումներ:Սա պայմանավորված է նրանով, որ դեռ չկա ակտիվ մեթոդների համընդհանուր ընդունված

սահմանում:Այսպիսով, երբեմն ԱՈՒՄ հասկացությունը ընդարձակումեն՝դրանց թվին դասելով ուսուցման ժամանակակից այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ինտերակտիվ սեմինարը, թրենինգները, պրոբլեմային ուսուցումը, ուսուցում համագործակցությամբ, ուսուցողական խաղեր և այլն:Կոնկրետացնելով, դրանք ամբողջական կրթական միջոցառման, կամ էլառարկայական ցիկլի կազմակերպման ձևեր են, չնայած, իհարկե, այդ ուսուցման ձևերի սկզբունքները կարող են օգտագործվել դասի առանձին մասերը անցկացնելո համար:

Ակտիվ ուսուցմանմ մեթոդները – մեթոդներ են, որոնք նպաստում են սովորողների ճանաչողական գործունեությունը:Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ:ԱՈՒՄ-ը բնութագրվում է սովորողների ակտիվության բարձր մակարդակով:Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից:ԱՈՒՄ-ը – մեթոդներեն, որոնք մատուցվող կրթական նյութերի յուրացման գործընթացում ապահովում են ուսանողների ակտիվությունը, մտածական և պրակտիկ գործունեության բազմազանությունը:ՈՒԱՄ-ը

հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական

բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, ուսանողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացումբոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա։ՈՒԱՄ-ի կիրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա։Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

Ուսումնական դրական խթանի ձևավորում,

Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացում.

Կրթական գործընթացին սովորողների ակտիվ ներգրավում.

Ինքնագործունեության խթանում,

Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն

Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,

Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,

Սովորողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,

Սովորողի ի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,

Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Ակտիվ ուսուցումը ուսուցիչների և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչները և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ:Եթե պասիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն էր, ապա այստեղ ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են՝սուբյեկտ-սուբյեկտային փոխհարաբերություններ:Պասիվ ուսուցումը ենթադրում է ուսուցում ավտորիտար ոճով, իսկ ակտիվ ուսուցումը ժողովրդավարական ոճով:

ԳԼՈՒԽ 2.

Ուսուցման փոխներգործուն մեթոդների տեսակները, կիրառումը և դաստիարակչական նշանակությունը

Համաշխարհային մանկավարժական պրակտիկան հարուստ փորձ է կուտակել փոխներգործուն մեթոդների տեսական մշակումների և գործնական կիրառությունների վերաբերյալ: Այս մոդելի առանձնահատկությունն ուսուցման գործընթացի հնարավորինս ակտիվացումն է, ինչպես նաև այնպիսի ուսուցանող միջավայրի ստեղծումը, որում սովորողը դառնում է իր իսկ ուսուցումը կազմակերպող անձ՝ գործընթացի սուբյեկտ՝ ինքնուրույնության բարձր աստիճանով: Փոխներգործուն մոդելն անպայման ենթադրում է ուսուցման գործընթացում ստեղծագործական առաջադրանքների առկայություն, ինչպես նաև պարտադիր շփում աշակերտ-ուսուցիչ համակարգում: Փոխներգործուն մոդելը նպատակ ունի ձևավորել ուսուցման այնպիսի պայմաններ, որոնցում բոլոր սովորողներն ակտիվորեն փոխգործակցում են: Այս մոդելը ենթադրում է նաև կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի

կիրառում, տեղեկատվական հոսքերի ներթափանցում սովորողների գիտակցության մեջ, որոնց շնորհիվ իրականանում է սովորողների ակտիվ գործունեությունը: Այս պատճառով էլ դասի կառուցվածքի մեջ ներառվում են փոխներգործուն մոդելի միայն առանձին տարրեր՝ փոխներգործուն տեխնոլոգիաներ, այն է՝ կոնկրետ ձևեր ու մեթոդներ, որոնք նպաստում են դասն առավել հագեցած, կենդանի և հետաքրքիր դարձնելուն: Փոխներգործուն ուսուցման գլխավոր նպատակը աշակերտի անձի ամբողջական զարգացումն է, իսկ վերջինիս հիմնական միջոցը, որը բացահայտում է անձի ընդունակությունները, իմացական և մտավոր ինքնուրույն գործունեությունն է: Այստեղից կարելի է եզրահանգել, որ ուսուցչի գլխավոր խնդիրը դառնում է դասագործընթացում այնպիսի գործունեության ապահովումը, որը կարող է իրականանալ միայն ժամանակակից փոխներգործուն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառմամբ: Վերջիններիս օժանդակությամբ աշակերտն ինքն է բացում դեպի իմացություն տանող ուղին, և ձեռք բերված գիտելիքը դառնում է նրա իսկ գործունեության արդյունքը: Փոխներգործուն տեխնոլոգիաները և մեթոդները բազմազան են՝ աշխատանք փոքր խմբերում՝ զույգերով, փոխատեղվող եռյակներով, կարուսելի, էվրիստիկական 10 զրույցի, դաս-սեմինարների (մտքերի փոխանակություն, բանավեճ), գործարար խաղերի, համագործակցային, մոդելավորման տեխնոլոգիաների կամ

նախագծերի մեթոդ և այլն: Ուսուցման ինտերակտիվ մեթոդների հիմքում ընկած է սովորողին խթանելու գաղափարը, որպեսզի սովորողը կարողանա առաջադրել վարկածներ, քննել, գտնել խնդիրների ու երևույթների միջև կապերը, ըմբռնել թեման և ձեռք բերել գիտական տարբեր փորձեր: Ուսուցման ինտերակտիվ մեթոդները սովորողի մեջ ձևավորում է խորհելու, քննադատելու, վերլուծելու, տարբեր իրավիճակներում սովորածը օգտագործելու, ծագող հարցերին պատասխանելու և նոր լուծումներ գտնելու կարողություններ ու հմտություններ: Ակտիվ

ուսումնառության և յուրացման ժամանակ սովորողը ինքն անձամբ, անմիջական փորձերի, ուղիղ փորձարկումների և հետազոտման ընթացքում ներգրավվելով, յուրացնում է գիտելիքները[3]:

Ինտերակտիվ ուսուցման հիմնական նպատակն է վերանայել ուսուցման ողջ բովանդակությունը, այսինքն՝ ճանաչել յուրաքանչյուր երեխայի անձի ստեղծագործ բնույթը: Նրա ներքին ակտիվությունը հանգեցնում է համապատասխան գիտելիքների որոշակի ծավալի յուրացմանը: Հետևաբար, ուսուցչի խնդիրն է դասի ժամանակ ապահովել այնպիսի գործունեություն, որին նպաստում է ժամանակակից ինտերակտիվ տեխնոլոգիաները: Այս դեպքում աշակերտն ինքն է բացում դեպի իմացություն տանող ուղին: Գիտելիքների յուրացումը

նրա գործունեության արդյունքն է[4]: Փոխներգործուն ուսուցման ժամանակ սովորողը ուսուցանող համակարգում հանդես է գալիս մշտապես փոփոխվող սուբյեկտիվ-օբյեկտիվ

3 .Mank- mitq- 2015 – 4.pdf 322/ 3442.

4.https://lib.armedu.am/resource/17065 11

հարաբերություններում՝ պարբերաբար դառնալով նրա ինքնավար ակտիվ տարրը: Փոխներգործուն մեթոդներով ուսուցման նպատակն է՝ ուսումնառության ընթացքում յուրաքանչյուր սովորող կկարողանա՝

1. կատարել թիմային աշխատանք միասնական որոշում ընդունել և դրանց համար պատասխանատվություն կրել. 2. սովորել և սովորեցնել.

3. դրական հարաբերություններ ստեղծել, ձևավորել ամբողջական մրցակցություն.

4. բախումնային իրավիճակներում հավասարակշռված պահվածք դրսևորել.

5. ուսուցման ընթացքում լինել բարեկիրթ, հարգել դասընկերոջ իրավունքները.

6. իրավիճակները դիտարկել և մեկնաբանել այլոց տեսանկյունից և այլն. Փոխներգործուն մեթոդները մեծապես նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների,

մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացի հետաքրքիր և աշխույժ դարձնելու պայմանների ստեղծմանը: Աշակերտներն այդ դեպքում պասիվ ընկալողից վերաճում են հայտնագործողի և գիտելիքների ստացման գործընթացի ակտիվ մասնակցի: Փոխներգործուն մեթոդները ավանդական մեթոդների հետ միասին ուսուցումը դարձնում են ավելի ճկուն, ապահովում ուսուցման արդյունավետությունը: Դպրոցականի ուշադրությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասընթացի կազմակերպում: Տարրական դասարաններում, ինտերակտիվ մեթոդների շնորհիվ, երեխաները հաճույքով են սովորում, ակտիվ մասնակցություն են ցուցաբերում և ավելի դյուրին են յուրացնում ուսումնական նյութը:

Փոխներգործուն մեթոդները հնարավորություն են տալիս գիտելիքների ստացումը վերածել ներքին շարժառիթների և ուրախ, խաղային գործընթացի, որն էլ

հանգեցնում է մանկավարժական գործընթացում որակական փոփոխությունների:

Փոխներգործուն մեթոդներով ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Այս մեթոդներով ուսուցման ընթացքում կարևոր է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային

գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: **Ուսուցման մեթոդների ընտրությունը դասի ընթացքում:**

Մեթոդի ճիշտ ընտրություն

Ուսուցման պլանավորման չորս կարևոր հարցերը

Հետաքրքիր մոտեցում է հարցերի միջոցով ուսուցման փուլերի պլանավորումը: Ուսուցիչը պլանավորման գործընթացում պետք է պատասխանի 4 հարցի:

Ի՞նչ պետք է անի ուսուցիչը դասին նախապատրաստվելիս կամ ընթացքում:

- Ի՞նչ պետք է անեն ուսուցիչն ու աշակերտները միասին:
- Ի՞նչ պետք է անեն աշակերտներն իրար հետ՝ առանց ուսուցչի միջնորդության:
- Ի՞նչ պետք է անի յուրաքանչյուր աշակերտ ինքնուրույն:

Այս հարցերին պատասխանելը հնարավորություն է տալիս պլանավորելու դասը, որի ընթացքում տեղի են ունենում ուսուցողական տարբեր գործընթացներ: Վերոնշյալը պարզ



երևում է հետևյալ գծապատկերում

Ուսուցման այս կամ այն մեթոդի ընտրությունը,նախևառաջ ,պայմանավորված է տվյալ առարկայի չափորոշչային և ծրագրային պահանջներով և ուսուցման նպատակներով:

Մեթոդն ինքնին ընդամենը գործիք է դասի նպատակին հասնելու համար*.կարևոր է ճիշտ ընտրել և օգտագործել այդ<<գործիքը>>՝ուսուցման նախապես պլանավորված նպատակներին հասնելու համար:*

Ստորև ներկայացնում ենք դասի տարբեր փուլերում կիրառման համար մեթոդների նկարագրություններ:

Brainstozming «ՈՒղեղի փոթորիկ»

Մասնակիցներին առաջարկվում է տալ առաջադրված խնդրին, հարցին հնարավորինս շատ լուծումներ, պատասխաններ անգամ ամենաֆանտաստիկ, անհավանական: Որից հետո բոլոր կարծիքներից ընտրվում են ամենահաջողվածները, որոնք կարող են կիրառվել գործնականում: Մեթոդը էֆեկտիվ է այնպիսի խնդիրների դեպքում, որոնք չունեն միանշանակ լուծում ու պահանջվում են ոչ ավանդական լուծումներ: Երբ պետք է արագ ելք գտնել ծայրահեղ վիճակից և կարճ ժամանակում ստանալ շատ կարծիքներ: Հաշվի են առնվում բոլոր մտքերը: Բոլոր մասնակիցները հավասար են: Արգելվում է որև է մտքի քննադատությունը:

Այս մեթոդը ընդգրկում է հետևյալ փուլերը:

Լուծումների, մտքերի հավաք

Բոլոր մտքերը գրանցվում են: Կարևոր է, որ մասնակիցները չընկճվեն արտահայտել անգամ ամենաանհավանական կարծիքները:

2. Վերլուծություն՝ քննարկվում են բոլոր առաջարկները:

3. Բոլոր առաջարկված լուծումներից, մտքերից ընտրվում է ամենահետաքրքիրը:

Մտագրոհ

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ

ունեն աշակերտները: Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտագրոհի հետ կապված: Բանն այնէ, որ դասերի ժամանակ

ակտիվ աշակերտները մենաշնորհում են մտագրոհը: Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց

մտքերը և հանձնել իրեն: Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին: Պարզապես լրացնում է այն:

«Կլոր սեղան»

Մեթոդը կիրառվում է որպես որև է հարցի քննարկման միջոց: «Կլոր սեղան» մեթոդի հիմնական մասը կազմում է դիսկուսիան կոլլեկտիվ քննարկվում է որև է հարց, համեմատվում կարծիքներ: Մասնակիցները կարող են լրացնել միմյանց կամ հակասել մեկը մյուսին:

Մեթոդի առանձնահատկություններն են՝

1. Բոլոր մասնակիցները պետք է կարծիք հայտնեն և ձգտեն, որ իրենց հասկանան:
2. Բոլոր մասնակիցները հավասարազոր են, ոչ ոք իրավունք չունի թելադրել իր կամքը և կարծիքը : «Կլոր սեղանի» առանձնահատկությունը այն է, որ այն պետք է իրոք կլոր լինի, այսինքն մասնակիցների շփումը պետք է լինի «աչք աչքի» ինչը բերում է ակտիվության մեծացմանը:

Մեթոդը թույլ է տալիս ամրապնդել ավելի վաղ ձեռք

բերված գիտելիքները և լրացնել բաց թողնված տեղեկատվությունը: Գիտելիքների փոխանակման հետ մեկ տեղ աշակերտները սովորում են արտահայտել իրենց մտքերը, գաղափարները: Սովորում

են հիմնավորել և պաշտպանել համոզմունքները:

Մեջբերումներ

Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյու- րի օգտագործումը: Դա կարող է լինել աֆորիզմ, թևավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն: Ահա մի քանի օրինակներ, որոնք կարելի է օգտագործել հատկապես հասարակագիտության դասերին՝

Ամեն արժեք գեղեցկություն է դառնում, բայց գեղեցկությունն ամեն արժեքից բարձր է…

Երվանդ Քոչար

Բարոյականությունն այնպիսի բան է, որը մեզ այլ բաներից ավելի շատ է հետաքրքրում:

Մենք կարծում ենք, որ բարոյական հարցերում մեր կայացրած յուրաքանչյուր որոշում ազդում է հասարակության ճակատագրի վրա…

Դեյվիդ Հյում

Դարաշրջանի կարևոր հարցերը լուծվում են ոչ թե ճառերով և մեծամասնության քվեարկությամբ, այլ երկաթով և արյամբ:

Օ. Բիսմարկ

Ինձ երբեք ծանոթ չի եղել մի բառ՝ հանձնվել:

Հաղթողին երբեք ոչ ոք չի հարցնում արդյոք նա ճի՞շտ էր, թե՞ սխալ: Մարդկանց կառավարելու երկու ուղի կա՝ անձնական շահ և փող: Գեներա՛լ, դուք ինձնից ուղիղ մի գլուխ բարձր եք, բայց եթե

շարունակեք ինձ հակաճառել, ապա ես անհապաղ կվերացնեմ այդ տարբերությունը:

Այս մտքերից մի քանիսի հեղինակները դասի սկզբում չեն նշվում: Միայն դասի ավարտին են աշակերտներն իմանում, որ խոսքերի հեղինակն իրենց կողմից որոշակիորեն կոնկրետ վերաբերմունքի արժանացած Ա. Հիտլերն է կամ Նապոլեոն Բոնապարտը:

Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՍ)

Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՍ-ը: Դասասկզբում ուսուցիչը գծում է Մ-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է *գիտեմ* սյունակը:

Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին:



Եվ լրացնում է *ուզում եմ իմանալ* սյունակը: Դասի վերջում լրացվում է *սովորեցի* սյունակը:

Կենտրոններով աշխատանք

Ստեղծվում են 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին: /Խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբին համապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային՝ համագործակցություն, որոշակի աշխատանքներում կարողությունների և հմտությունների խորացում, այնպես էլ պատահականության սկզբունքով/:

Կենտրոններ.

*հետազոտողների կենտրոն * գրավոր աշխատանքի կենտրո *բացահայտողների

*կենտրոն *ստեղծագործողների կենտրոն*

Ուսուցիչը կարող է իր հայեցողությամբ ավելացնել կամ պակասեցնել կենտրոնների թիվը՝ փոխելով կամ հարմարեցնելով անունները:

Բացահայտողների կենտրոն

Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը, կատարում նշումներ, վեր հանում վերջինիս հիմնական միտքը, ենթատեքստը և ներկայացնում ընկերներին:

Հետազոտողների կենտրոն

Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և օգտվելով այդ պահին ձեռքի տակ եղած այլ աղբյուրներից՝ համացանց, գրականություն, փորձում են լրացուցիչ հետաքրքիր նյութեր հայթայթել տեքստի վերաբերյալ:

Ստեղծագործողների կենտրոն

Մասնակիցները, տեքստի առանձնահատկություններից ելնելով, փորձում են այն որևէ կերպ վերարտադրել և ներկայացնել, օրինակ՝ բեմականացում, պաստառի պատրաստում,ֆիլմ:

Գրավոր աշխատանքի կենտրոն

Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և իրականացնում լեզվական կամ բառային աշխատանք՝ պահանջին համապատասխան:



Ֆրայերի մոդելը

Սա շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրե՛լ օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:



1. **Գիտելիքի դոմինո**

Սովորողները նստում են մեծ սեղանի շուրջ:

Քայլ 1 - Բոլոր սովորողները ստանում են առնվազն 1 քարտ՝ կախված թեման ամփոփող հարցերի քանակից և սովորողների թվից:

Քայլ 2 - Ուսուցչի հրահանգով սովորողներից մեկը իր մոտի քարտը, վրայի հարցը կարդալով, դնում է սեղանին

Քայլ 3 - Հնչած հարցի պատասխանն ունեցող սովորողը ասում է պատասխանը և իր քարտը դնում սեղանին՝ նախորդ քարտի հարցի շարունակությամբ, ու կարդում իր քարտի հարցը:

Քայլ 4 - Հաջորդաբար շրջանաձև դրվում են բոլոր քարտերը:

Քայլ 5 - Ավարտին շրջվում են բոլոր քարտերը, և ճիշտ դասավոր- վածության պարագայում քարտերի դարձերեսին երևում է թե- մայի կարևոր հասկացությունը կամ միտքը: Օրինակ՝ արդար աշխատանքն արժանի է արդար վարձատրության:

Քայլ 6 - 2-3 աշակերտ արտահայտում է վերջնական մտքի վերա- բերյալ սեփական մոտեցումները:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծությամբ եկել ենք հետևյալ եզրահանգումների.

Մանկավարժական տեխնոլոգիաները և մեթոդները նպաստում են սովորողի ստեղծագործական, հաղորդակցական, ինքնուրույն գործունեության, կարողությունների և հմտությունների, արժեքային համակարգի ձևավորմանը, դաստիարակում են բարոյական որակներ, բարձրացնում է ուշադրությունը և առաջադիմությունը:

Փոխներգործուն մեթոդները դպրոցում կարող են արդյունավետ կիրառվել ու նպաստել ուսուցման որակի բարձրացմանը, ի նչպես նաև սովորողների ստեղծագործական, համագործակցային, ճանաչողական կարողությունների ու հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Փոխներգործուն մեթոդներով պլանավորված դասերին ակտիվորեն մասնակցում են բոլոր աշակերտները, որովհետև այդ դասերը հետաքրքիր են, մատչելի, գրավիչ: Նպաստում են մեծ ծավալ ունեցող ուսումնական նյութի ավելի հեշտ յուրացմանը, ինչպես նաև կարողանում են ձեռք բերած գիտելիքները, կարողությունները և հմտությունները կիրառել գործնականում:

Փոխներգործուն մեթոդների կիրառումը դպրոցում անմիջապես կախված է ուսումնական նյութի բարդությունից, ծավալից ու ստեղծված իրավիճակից: Փոխներգործուն մեթոդների ընտրությունը ճկուն է, ուստի ուսուցիչը կարող է հեշտությամբ հարմարեցնել դպրոցականի հոգեբանամանկավարժական առանձնահատկություններին:

Գրականություն

1. Алехин А.Ю. Общие методы обучения в школе. — К.: Радянська школа, 1983. — 244с.

2.«knowledge: definition of knowledge in Oxford dictionary (American English) (US)»: oxforddictionaries.com: Արխիվացված օրիգինալից-ից 2010-07-14-ին

3.↑ Գ.Ե.Ղույումչյան, «Մանկավարժություն», գիրք 1-ին, Երևան, 2005 թ

4.Балаев А.А. Активные методы обучения. М., 2006.

5.Смолкин А.М. Методы активного обучения. М., 1991.

6.Анцибор М.М. Активные формы и методы обучения. Тула 2002

7.Выготский Л.С. Педагогическая психология.

8. https://lib.armedu.am/resource/17065

9. L.VYGOTSKY…vipusk-party.ru

10. Mank- mitq- 2015 – 4.pdf

11. 1.https//ru.m.wikipedia.org>wiki/

Հավելված

Դասի պլան

Առարկան՝ Մայրենի

Դասարանը՝ 6-րդ

Բաժինը՝ Հայրենի բնաշխարհ

Թեմաները՝ Ա./Ավ.Իսահակյան<<Արագածին>>

Բ.Գեղարվեստական և գիտական խոսք

Դասի նպատակը՝

Աշակերտներին տեղեկություններ տալ շրջակա միջավայրի(Արագած լեռ)մասին

.Ստեղծագործության գլխավոր գաղափարի մասին

.Զնավորել բնապաշտ և հայրենասեր քաղաքացի

2.Ընդհանուր զարգացում

- *երևակայության,պատկերավոր մտածողության կարողունակությունների զարգացում:*

Վերջնարդյունքներ՝

1.Աշակերտը կսովորի և կիմանա

- տեղեկություններ Ավ.Իսահակյանի կյանքի և գործի մասին
- բանաստեղծության գաղափարական բովանդակությունը
- շրջակա աշխարհի մասին/Արագած լեռը/
- գեղարվեստական խոսքի լեզվաոճական առանձնահատկությունները
- գիտական խոսքի լեզվաոճական առանձնահատկությունները

Աշակերտը կկարողանա

. Շրջապատող աշխարհի ,բնության նկատմանբ հոգատար վերաբերմունք դրսևորել

.պատմել Ավ.Իսահակյանի մասին

բանավոր և գրավոր խոսք կազմել

Ուսումնական նյութեր՝ Ավ.Իսահակյանի դիմանկարը,Արագած լեռը պատկերող սահիկներ,Մարտիրոս Սարյանի կտավներից,երաժշտություն:

Կիրառվող մեթոդներ՝ <<Զրույց>>,<<Խթանող հարցեր>>,,դերային խաղ:

Նախապատրաստական աշխատանք.նախօրոք դասարանը բաժանվում է խմբերի՝զեկուցողներ,գրականագիտական տեղեկություններ հաղորդողներ,3-րդ խումբը

կներկայացնի Ստ.Կուրտիկյանի<<Արագածի չորս կատարները>>ավանդազրույցը՝դերային խաղի միջոցով,4-րդ խումբը պետք է պատրաստվի Ավ.Իսահակյանի <<Արագածին>> բանաստեղծության վերլուծությանը:

Դասի ընթացքը

Խթանում (10-15րոպե)

Դասարանում փակցված են աշակերտների՝Արագածի նկարազարդումներից, Ավ.Իսահակյանի դիմանկարը:

Դասն սկսվում է <<Միասնության շուրջպար>>երգով՝Լեյլա Սարիբեկյանի կատարմամբ: Երաժշտության ունկնդրումը երեխաների հայրենասիրական ոգու , ազգային արժանապատվության, միասնության գիտակցության բարձրացման նպատակն ունի:

Սահիկների միջոցով ցուցադրվում է Արագածի հրաշք բնությունը՝հավերժական ձյունը,խառնարանային կրկեսը,երփներանգ ծաղիկները,լճակները,գետակներն ու առվակները:

Զեկուցողներն ,իրար լրացնելով,պատմում են Արագած լեռան մասին՝կիրառելով գիտական բառապաշարի բառեր:

Գրականագիտական խմբի աշակերտները պատմում են գիտական խոսքի առանձնահատկությունների,բառապաշարի մասին:Համեմատություն են կատարում սահիկներով ցուցադրված նկարների,գիտական խոսքի միջև,կատարում եզրակացություն.նրանք տալիս են բնության իրական պատկերը:

3-րդ խումբը ներկայացնում է Ստ.Կուրտիկյանի<<Արագածի չորս կատարները>>՝դերային խաղի միջոցով: Քառագագաթ Արագածը ,ժողովրդի պատկերավոր մտածողությամբ,քույրերի, անձնազոհության խորհրդանիշն է:

Իմաստի ընկալման փուլ(10-15րոպե)

Ցուցադրվում են Մարտիրոս Սարյանի՝Արագածը ներկայացնող նկարները:Երեխաները համոզվում են,որ աշխարհահռչակ նկարչի գույներն անկրկնելի են:Անկրկնելի է նաև մեծանուն բանաստեղծի բառային գունանկարը:

4-րդ խումբը կենսագրական հակիրճ տեղեկություններ է հաղորդում Ավ.Իսահակյանի մասին,հատկապես՝ Արագածի փեշերին անցկացրած մանկության մասին: Գրականագիտական խմբի աշակերտները ներկայացնում են գեղարվեստական խոսքի առանձնահատկությունները:

Ապա արտասանում են բանաստեղծությունը,բացատրում ալմաստ,սեգ,պերճ,աբրեշում բառերի իմաստը:Զրույցի միջոցով արտահայտում են իրենց համակած զգացմունքների մասին:Բանաստեղծը հասել է իր նպատակին՝այն ձոն է,փառաբանություն,ջերմ հայրենասիրության,հայրենի եզերքի հանդեպ ունեցած անսահման սիրո

արտահայտություն:Աշակերտները համեմատություն են կատարում գեղանկարչության և բանաստեղծության միջև:Նրանց տարբերությունը գույնն ու բառն է: Բանաստեղծը գունանկարն ստեղծել է մակդիրների,համեմատությունների,փոխաբերությունների,անձնավորման միջոցով:

Աշակերտներն հիշում են գեղարվեստական պատկերավորման միջոցները: **Ալմաստ վահան կայծակեղեն թրերի**,**բյուրեղ վրան**,**արծվի բույն**,**փայլուն,պերճ գոտիներ ոսկեհյուս**,**խոսքի բռնված իրար հետ** կապակցությունները խոսքի խոշոր կտավներ են:Արագածը միշտ ոգեշնչել է հայ մարդուն և ծնվել են երգ ու բանաստեղծություն,նկար և ավանդազրույց:

Կշռադատման փուլ(10-12րոպե)

Անդրադարձ

Վերջում կատարում ենք հարցադրումներ

Դուք ներկայացրեցիք Արագած լեռը գիտական և գեղարվեստական խոսքի միջոցով,լսեցիք երգ, դիտեցիք նկարչի ստեղծագործություն:

.Դուք ինչպե±ս, ի±նչ միջոց կընտրեք Արագածը նկարագրելու համար:

Վերջում տրվում է անհատական տնային հանձնարարություն.(3րոպե)

.Գրել գիտական կամ գեղարվեստական շարադրանք՝ <<Արագած>>.

<<Արագածին>>բանաստեղծության նկարազարդում:



Կազմեց՝ Ավշարի միջնակարգ դպրոցի Հայոց լեզվի և Գրականության ուսուցչուհի Ծ.Սահակյան